ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 125

ք. Երևան 20.06.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/6» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 00928523, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Լվովյան 13, 3 (այսուհետ՝ նաև Մասնակից)): Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ հայտով ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/18» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), մասնավորապես՝

«Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում 4-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրերում նշված է «ՏՊ 3689-003-37381215-2014», իսկ ընթացակարգի հրավերով նախատեսված է «ՏՊ 3689-003-10524112-2001 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ», ինչպես նաև որոշ պարամետրեր՝ լայնությունը, բարձրությունը, քաշը չի համապատասխանում հրավերի պահանջներին, իսկ 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է և ԳՕՍՏ, և ՏՊ:

Գնահատող հանձնաժողովը առաջարկեց Մասնակցին շտկել անհամապատասխանությունները՝ վերոնշյալ ընթացակարգի հրավերով նախատեսվածից տարբերվող ՏՊ ներկայացնելու դեպքում, ներկայացնել նաև դրա կրկնօրինակը, չհամապատասխանող ցուցանիշները համապատասխանեցնել հրավերով սահմանված պահանջներին, իսկ 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշել կոնկրետ՝ կամ ԳՕՍՏ, կամ ՏՊ, բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է 5-րդ չափաբաժնի մասով արձանագրված անհամապատասխանությունը, նշելով հրավերով նախատեսված ԳՕՍՏ-ը, իսկ 4-րդ չափաբաժնով մասնակիցը ներկայացրել է հրավերով նախատեսվածից տարբերվող «ՏՊ 3689-003-37381215-2014»-ի կրկնօրինակը, իսկ որոշ պարամետրեր՝ լայնությունը, բարձրությունը, քաշը թողել է անփոփոխ: Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի ներկայացրած ՏՊ-ի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ որոշ ցուցանիշներ՝ երկարությունը, լայնությունը և բարձրությունը չեն համապատասխանում հրավերով նախատեսված 4-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրին: ՈՒստի հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և ընթացակարգի հրավերի 8.10 կետերի պահանջները՝ եթե սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար, հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, գնահատող հանձնաժողովի կողմից «Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ հայտը 4-րդ չափաբաժնի մասով մերժվեց:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը, որոշում եմ՝ «Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ